

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը Խոսում է վերջերս Լենինգրադի ռուսաց հոգևոր ճեմարան կատարած իր այցելության տպավորության և այդ հաստատության կանոնադրության ու ուսումնա-դաստիարակչական ծրագրերի մասին:

*
* *

Փետրվարի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երթայք գործեցէք մի՛ զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ ի կեանսն յաւիտենականս» (Հովհ. Զ 27) բնաբանով (Քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 35):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *
*

Փետրվարի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում «Հայաստանը և Բյուզանդիան» թեմայով դասախոսությամբ հանդես է գալիս ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Յուզբաշյանը:

Հարգելի դասախոսն իր հանգամանալից զեկուցումից հետո պատասխանում է ուսանողների տված մի շարք հարցերին:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Նորին Սրբությունը խոսում է «Ի՞նչ պետք է հասկանալ քրիստոնեական սեր ասելով» թեմայի մասին:

*
* *

Փետրվարի 12-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում համերգով հանդես է գալիս Հայհամերգի մենակատարների «Շարական» խումբը:

Համերգի ծրագրում ընդգրկված էին հայկական և եվրոպական շարականներ, միջնադարյան տաղեր ու մեղեդիներ:

Համերգին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ուսանողությունը և հյուրեր:

*
* *

Փետրվարի 13-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցող Տեառնընդառաջի նախատոնակի ժամերգությունից հետո, ժամը 19.30-ին, մայրավանքի բակում վառվում է ավանդական խարույկը, որի շուրջ երգերով ու արտասանություններով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի ուսանողությունը:

*
* *

Փետրվարի 16-ին, երեքշաբթի.—Տօն Սրբոց Ղևոնդեանց քահանայիցն.

Այսօր Մայր տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, իր եպիսկոպոսական պատարագն է մատուցում Հունաստանի Հայրապետական պատվիրակ և Դամասկոսի թեմի հայոց առաջնորդ նորապսակ Տ. Ոսկան եպս. Գալբակյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսում:

*
* *

Փետրվարի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 21-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Բարսեղ քհն. Ղազարյանը:

«Հայր մեր»-ից առաջ Մեծի Պահոց խորհրդի և հոգևոր նշանակության մասին քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը (Քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 10):

*
* *

Փետրվարի 23-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը, տեսչության ղեկավարությամբ, մեկնում է Ծաղկաձոր՝ չորսօրյա ձմեռային հանգստի:

*
* *

Փետրվարի 24-ին, չորեքշաբթի.—Այսօրվանից սկսվում է Մայր տաճարում Մեծի Պահոց հատուկ Արևագալի, Խաղաղականի և Հանգստյան ժամերգությունների մատուցման շրջանը:

*
* *

Փետրվարի 26-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

Փետրվարի 28-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Աստուած քաւեա զիս զմեղաւորս» բնաբանով քարոզ է խոսում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

ԿԱՐԳԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԱՃՅԱՆԻ

Նորին Ամենապատվություն Թուրքիայի հայոց Տ. Շնորհք Սրբազան Պատրիարքի նախագահությամբ սույն թվականի հունվարի 28-ին Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանում գումարված Կրոնական հատուկ ժողովը, հաստատելով Խաչատուր վարդապետ Սարաճյանի վերջին տարիների խառնակ ու կասկածելի գործերը, հակաեկեղեցական վարմունքը, ինչպես նաև նրա կատարած դրամական զեղծումները, միաձայնությամբ որոշել է կարգալույծ հռչակել Կ. Պոլսի Պատրիարքության իրավասության ներքո գտնվող նախկին վարդապետ Խաչատուր Սարաճյանին և նույն թվականի պաշտոնագրով նրան դասել է «աշխարհականաց կարգ»-ը՝ Երվանդ Սարաճյան իր նախկին անունով: